

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ*

*ԶԱԶՈՒՌ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ*

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԶԱԶՈՒՌ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 1.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ և ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
- 1.5. ԲՆԱԿԵԼԻ և ՈՉ ԲՆԱԿԵԼԻՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
- 1.6. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
- 1.8. ԲՆՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
- 1.10. ԱՌԵՏՈՒՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.13. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՄԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- 1.14. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 4.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 4.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ուրրտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ջաջուռ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶՀԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն ներկայացնում է Ջաջուռ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Ջաջուռ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Տաթև համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ջաջուռի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

1.1 ԱՇԽԱՂՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱԼԿ

Շիրակի մարզի Ջաջուռ համայնքը հիմնադրվել է 1827թ. Արևմտյան Հայաստանի Խնուսի գավառների գյուղերից և մի մասն էլ Ղարսի նահանգի գյուղերի բնակիչներից 1915-1920թթ. ժամանակներում տեղահանված գաղթականների կողմից:

Հիմնադրման պահից մինչև օրս գյուղը կոչվում է Ջաջուռ: Գյուղի անունը առաջացել է (ավանդույթի համաձայն) «ջան ջուր» և «ջոջ ուռենի» դարձվածքներից: Գյուղը հայտնի է իր խմելու ջրի, սառնորակ աղբյուրների հարուստ պաշարով:

Գյուղի բնակչությունը միայն հայեր են: Գյուղը իր մասնակցությունն է ունեցել ինչպես 20-րդ դարի սկզբին այնպես էլ հետագայում երկրում կատարված փոփոխություններին, անցել է խորհրդացման և կոլեկտիվացման բարդ ժամանակաշրջանները, մասնակցություն է ունեցել հայրենական մեծ պատերազմին (մասնակիցների թիվը 300 մարդ, զոհվածների թիվը 70 մարդ) Արցախյան ազատամարտին:

1920 թվականից գյուղը ունեցել է դպրոց, որտեղ սովորել են 9 գյուղերի երեխաներ, Ջաջուռում է եղել «դյուզբյանդ» շրջանի դատարանը, «գլավնո» ե նստավայրը, որի շենքը կիսաավերված վիճակում կա մինչև օրս:

1989-1901թթ. կառուցվել է Ջաջուռի թունելի 2 կմ. երկարությամբ կապելով Վրաստանը Գյումրու և Ղարսի նահանգներին:

Գյուղի կոլեկտիվացումը սկսվել է 1930-ական թվականներին և հիմնվել է կոլեկտիվ տնտեսությունը, որը գործել է մինչև 1958թ.: 1958թ. կոլեկտիվ տնտեսությունը դարձել է պետ. տնտեսություն, որի մեջ ընդգրկվել են Սարիար, Կրաշեն, Լեռնուտ գյուղերը:

1991թ. Հողի սեփականաշնորման ընթացքում գյուղում ստեղծվել են 220 գյուղացիական տնտեսություններ:

1930-ականներին գյուղի առաջին նախագահն եղել է «25000»-ական Համբարձում Ավդալյանը: Գյուղը ունեցել է 4 մարդ «խորհրդային ժամանակների» հանրապետական կարգի թոշակառուներ:

Ջաջուռում է ծնվել Հայաստանի ժողովրդական նկարիչ՝ Մինաս Ավետիսյանը, 5 գրքերի հեղինակ բանաստեղծ Աշոտ Ավդալյանը, գնդի հրամանատար Ազատ Հարությունյանը, գնդապետ Վոլոդյա Բաղդասարյանը, հանրապետությունում ճանաչված վիրաբույժ Վարազդատ Մխիթարյանը, դոկտոր-պրոֆեսոր Միքայել Դավթյանը, ոստիկանության գեներալ-մայոր Աշոտ Գրիգորյանը, Արցախյան ազատամարտում է զոհվել Ջաջուռեցի Դավիթ Գևորգյանը «մահապարտների գումարտակ» 5 (հինգ) ազատամարտիկներ համարվում են վետերաններ: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է: Վերջին տարիներին մշակվում են տեխնիկական մշակաբույսերի, նկատվում է անասնազլխաքանակի դինամիկ աճ:

Գյուղը հիմնովին ավերվել է 1988թ. դեկտեմբերի աղետալի երկրաշարժից: Կորցրեց մշակույթի ու սոցիալ-տնտեսական նշանակության օբյեկտները, փլվեցին ու վթարային դարձան մի քանի տասնյակ բնակարաններ:

Արդեն 28 տարի է նվիրումով վերականգնվում է մեր ծննդավայրը: Գյուղը կամաց-կամաց կառուցապատվում ու բարեկարգվում է:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	980
	Տղամարդիկ	505
	Կանայք	475
	Մինչև 1 տարեկան	14
	1-2 տարեկան	14
	3-4 տարեկան	8
	5-6 տարեկան	23
	7-10 տարեկան	21
	11-14 տարեկան	31
	15-17 տարեկան	46
	18-22 տարեկան	78
	23-45 տարեկան	302
2.	46-62 տարեկան	310
	63 և բարձր տարիքի	133
3.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	
4.	Տարիքային և աշխատանքային	140
5.	Փախստականներ	0
6.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
7.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
8.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
	Արցախյան պատերազմի մասնակիցներ	5
9.	Հաշմանդամներ, այդ թվում՝	28
10.	Մանկուց հաշմանդամներ	9
15.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	30
	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0
16.	Բնակարանի կարիքավոր	58

	ընտանիքների թիվը, այդ թվում՝	
17.	Անօթևան ընտանիքներ	35
18.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	23
	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	53
	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	68

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ջաջուռ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով Ջաջուռ համայնքի աշխատակազմը բաղկացած է 7 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Ջաջուռ համայնքի կենտրոնում: Շենքը փայտաշեն է, ընդհանուր վիճակը բավարար է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1980-ական թվականներից է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով: Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 30-Ա որոշմամբ: (աղյուսակ 4):


Աղյուսակ 2. Ջաջուռ համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային և միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	236450
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	153692
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	177337
4.	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ (2.3-1)	1	1	158421
5.	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	133000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
6.	Ջրագծի հսկիչ	1	1	127652
7.	Համակարգչային օպերատոր	1	1	72750

Աղյուսակ 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Գեվորգյան Սամվել		Միջնակարգ	անկուսակցական
2.	Ենգոյան Սամվել		Միջին մասնագ.	անկուսակցական
3.	Խաչատրյան Յրանտ		Միջին մասնագ.	անկուսակցական
4.	Խուրշուդյան Աղվան		Միջնակարգ	անկուսակցական
5.	Պետրոսյան Ռուբիկ		Միջնակարգ	անկուսակցական

Գծապատկեր 1. ԶԱԶՈՒՌ ԴԱՄԱՅՆՔԱՂԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



1.4 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է ոչ կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում: Բնակիչներն աղբը դնում են մայթերին, որտեղից մենքենան հավաքում է: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 15 %-ը: Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը:

համայնքում առկա է գերեզմանատուն ցանկապատման, կա եղած ցանկապատերի թարմացման խնդիր:

1.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՆԿՈՒՄ

Համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 160, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1800 քմ :

Ջաջուռ համայնքում բնակֆոնդի վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար: առանձնատները հիմնականում 1965-1975-ականների կառույցներ են՝ պարբերաբար վերանորոգումներով գտնվում են լավ վիճակում: 1988թ-ի երկրաշարժից հետո համայնքում կառուցվել է 70 առանձնատներ:

1.6 ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2416.21 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1672.13հա, բնակավայրերի հողերը՝ 100.71 հա, արտադրական նշանակության հողերը՝ 25.89 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 12.33 հա, անտառային հողերը՝ 577.33 հա, հատուկ պահպանության հողերը՝ 11.17 հա, հատուկ նշանակության հողերը՝ 0 հա և ջրային հողերը՝ 16.66 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափն կազմում է 1,0հա:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների մեծ մասը ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ

Է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Ջաջուռ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և բազմատեսակ պտուղներ:

Ջաջուռ համայնքում ոռոգման ջուրը ինքնահոս եղանակով բերված է սարերից և հիմնականում բավականացնում է ոռոգելի տարածքներին:

Աղյուսակ 4-ում ներկայացված է համայնքում առկա անասնազվխաքանակի վերաբերյալ տվյալներն:

Աղյուսակ 4. ՋԱԶՈՒՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝	805
	Կովեր	371
2.	Խոզերի գլխաքանակը	109
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	638
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Ձիերի գլխաքանակը	1
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1200
7.	Մեղվարնտանիքների քանակը	45

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը: Ջաջուռ համայնքը չունի կոյուղաջրի մաքրման կայան՝ կոյուղու կոլեկտոր: Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել կոյուղու գլխավոր կոլեկտոր,
- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- բարեկարգել զբոսայգիները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,

- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագրվագրների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ջաջուռ համայնքն ունի 8 կմ երկարությամբ փողոցներ և դաշտամիջյան ճանապարհներ: Ճանապարհների և փողոցների մեծ մասն անբարեկարգ է: Ճանապարհները հիմնականում գրունտային և խճապատ են, որոնք էլ լինելով թեքությունների վրա, հաճախակի տեղացող հորդառատ անձրևների պատճառով ամբողջովին քայքայվում են և որոշ տեղերում դառնում դժվար կամ գրեթե անանցանելի::

Համայնքաբնակների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների նկարագիրն ու քանակները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.ՋԱԶՈՒՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐՆ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Մարդատար ավտոմեքենաներ	150
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	46
3.	Կոմբայններ	3
4.	տրակտորներ, որից՝ Թրթուրավոր	11 6
	Անվավոր(Կիրովեցներ)	5
5.	Բեկառուսներ	4

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջաջուռ համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի մեկ խանութ:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ջաջուռ համայնքում գործում են հանրակրթական միջնակարգ 1 դպրոց որը ունի վերանորոգման կարիք: դպրոցը ջեռուցվում է կենտրոնացված եղանակով, դիզվառելիքով: Դպրոցում գործում է նախակրթարան: Դպրոցի շենքը կառուցվել է 2001 թվականին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ պետական բյուջեի միջոցներով 2015թվականին դպրոցում անցկացվել է ջեռուցման համակարգ: Դպրոցն մասնակի է ապահովված անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով: Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը: Համայնքն ունի մարզադաշտ, որը վերանորոգման և կառուցապատման կարիք ունի: Համայնքում չկա մարզադալիճ: Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է գյուղում գործող ամբուլատորիայի կողմից : Որտեղ աշխատում են երկու բժիշկ, երկու բուժքույր, կա շտաբ օգնության մեքենա:

Աղյուսակ 6-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատության աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 6. Ջաջուռ համայնքի միջնակարգ դպրոցի, վերաբերյալ ցուցանիշներն

Հ/հ	Ցուցանիշները	Շրջանը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝	22
	Մանկավարժներ	18
82	Աշակերտների թիվը	82

1.12 ԲՆԱԿԻԶՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ jajur.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության

նկատմամբ վստահության բարձրացումը: Մակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

1.13 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Ջաջուռ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: համայնքում եղած թաքստոցները հաճվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

1.14 Համայնքի ուժեղ կողմերը

Համայնքն ունի զարգացման մեծ ներուժ իր բնական ու մարդկային ռեսուրսներով, Գյուղն ունի աշխարհագրական լավ դիրք, թիկնած սարերի փեշին թեքության վրա, որն ապահովվածություն է հեղեղումներից:

Համայնքն ունի 1910թ. կառուցված եկեղեցի, որն ունի վերանորոգման ու խնամքի կարիք:

Համայնքում գործում է աշխարհահռչակ նկարիչ Մինաս Ավետիսյանի թանգարանը:

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, բնակարանային ֆոնդ և այլն) ոչ բարվոք վիճակը

- ✓ Բնակարանի կարիք ունեցող ընտանիքները:
- ✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- ✓ Ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

1.17. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

1.18. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կոյուղու բացակայություն
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն համայնքի վարչական նստավայրում շենքային անբավարար պայմաններ
- ✓ Կանգառների բացակայություն
- ✓ Ոռոգման ջրի արտաքին և ներբնակավայրային ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- ✓ համայնքի փողոցների անբարեկարգ վիճակ
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի
- ✓ ձեռքբերման անհրաժեշտություն
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Համայնքային կենտրոնի կառուցում
- ✓ գազաֆիկացում
- ✓ եկեղեցու վերանորոգում
- ✓ ներհամայնքային դաշտամիջյան ճանապարհների նորոգում

✓ Գերեզմանատների ցանկապատերի անբարեկարգ վիճակ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ջաջուտ համայնքում գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Գյումրի քաղաքի հետ, որը համարվում է տարածաշրջանային կենտրոն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների:

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:

- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:

- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատասպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

Օրինակ, ակնկալվում է „Կարիտաս“, կազմակերպության աջակցությամբ համայնքում իրականացնել ոռոգման համակարգի հիմնանորոգում:

**Յ.ՀԱՄԱՅՄԵՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետություն
Շիրակի մարզ Ջաջուռ համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 28
որոշման

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքացուցակ

N	Անվանումը	Քանակ	Թողարկման թիվը	Բալանսային արժեքը	Տեխնիկ. վիճակը
1.	Տրակտոր T 70c	1	1985	54294	անսարք
2.	Էքսկավատոր 50-2621	1	1989	106621	անսարք
3.	Կուլտիվատոր կարտոֆիլի	1	1989	1878	անսարք
4.	Շարքացան գազարի	1	1985	9500	անսարք
5.	Հատիկաքարձիչ ՅՄԸ-1000	1	1985	8162	անսարք
6.	Կարտոֆիլ ցանող	1	1988	8600	
7.	Գոմաղբ ցանող	1	1984	5213	անսարք
8.	Կարտոֆիլ քանդող կտն. 21	1	1989	8600	անսարք
9.	Պարատանյութ ցանող նռու	1	1989	4753	անսարք
10.	Ավտոկշեռք	1	1986	5213	անսարք
11.	Պահեստ	2		1232000	օգտագործվող
12.	Գյուղապետարան	1	2002	921700	բնակելի
13.	Բաց արտադրական բազա	1		220000	կիսաքանդ
14.	Պահեստ	1		80000	կիսաքանդ
15.	Անասնագոմ	1		42000	կիսաքանդ
16.	Համակարգիչ	1	2006	258300	սարքին
17.	Տպիչ	1	2006	67200	սարքին
18.	Քարթրիչ	1	2006	24000	սարքին
19.	Պատճենահանման սարք	1	2010	120000	սարքին
20.	Ծառ. մեք. ԳԱԶ-3102	1	2007	2860000	սարքին
21.	Համակարգիչ	1	2012	220000	սարքին
22.	Համակարգիչ«Ա» giZ	1	2013	344520	սարքին նվ.
23.	Համակարգիչ«Բ» giZ	1	2013	285120	սարքին նվ.
24.	Էկրան	2	2013	69120	սարքին նվ.
25.	Էլ.էներգիայի անխ. սն. սարք	2	2013	45630	անսարք նվ.
26.	Տպող սարք	1	2013	126792	սարքին նվ.
27.	Պատկերամուտ	1	2013	41407	սարքին նվ.
28.	Ցանցային կոնցենտրատոր	1	2013	16113	սարքին նվ.
Շրջանառու միջոցներ					
29.	Երկաթյա պահարան	2		32000	
30.	Գրասեղան	4		3000	
31.	Աթոռներ	4		2000	
32.	Օֆիսի պահարան	1	2009	54167	
33.	Օֆիսի պահարան	1	2009	33333	
34.	Օֆիսի սեղան	2	2009	75000	
35.	Համակարգչի սեղան	1	2009	25000	
36.	Հեռուստացույցի տակդիր	1	2009	20833	
37.	Աթոռներ	6	2009	100000	
38.	Օֆիսի աթոռ	1	2009	25000	
39.	Համ. կոմուն. մալուխ	50մ	2013	7700	նվիրատվություն
40.	Երկար. հաղորդալար խրոցակ.	2	2013	7400	նվիրատվություն
41.	Միացուցիչներ	10	2013	900	նվիրատվություն
42.	Ամրակ	1	2013	400	նվիրատվություն

43.	Մայրուխ	1	2013	950	նվիրատվություն
44.	Սեղան օֆիսի	3	2015	120000	
45.	Օֆիսի աթոռ	1	2015	60000	
	ԸՆԴԱՄԵՆԸ			7900252	

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներից միայն Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին :

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը: Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ծախսային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

N	Եկամտային մաս	Հաշվարկայի /հազար դրամ/	Հաշվարկայի /հազար դրամ/
1.	Հողի Հարկ	7131	2512,2
2.	Գույքահարկ համ. վարչ. կարած. գտնվող շենք և շին. համար	7131	27.0
3.	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	7136	1553,0
4.	Տեղական տուրքեր	7145	40.0
5.	Դոտացիաներ	7331	15635.1
6.	Վարձակալական հողերի վարձավճար	7415	966.7
7.	Գույքի վարձակալությունից	7415	40.0
	Ընդամենը		20774.0
N	Ծախսային Մաս Ապարատի պահպանում		Հաշվարկային /հազար դրամ/
1.	Աշխատավարձ	4111	13279.0
2.	Պարգևատրում	4112	1090.0
4.	Էներգետիկ ծառայություններ	4212	50.0
5.	Կապի ծառայություններ/	4214	300.0
6.	Ապահովագրական ծախսեր	4215	45.0
7.	Ներքին գործուղումներ	4221	150.0
8.	Տեղեկատվական ծառայություններ	4234	100.0
9.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	200.0
10.	Մասնագիտակ ան ծառայ ու թյ ու ն	4241	100.0
11.	Գրասենյակային նյութեր	4261	300.0
12.	Տրանսպորտային նյութեր	4264	600.0
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն		
1.	համակարգչային ծառայություններ	4232	90.0
	Ընդ. բնույթի հանրային ծառ.(այլ դասերին չպատկանող)		
2.	Մասնագիտական ծառայություններ	4241	100.0
3.	հատուկ նպատակային այլ նյութեր	4269	100.0
4.	Պարտադիր վճարներ	4623	30.0
5.	Նվիր. այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	4819	300.0
	Տրանսպորտ		

1.	շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	400.0
	Բնակարանային շինարարության և եվկոմունալ ծառայություններ		
	Ջրամատակարարում		
1.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	100.0
2.	Այլ հարկեր	4822	20.0
	Փողոցների և ուսավորում		
1.	Էներգետիկ ծառայություններ	4212	400.0
	Հանգիստ, մշակույթ եվ կրոն		
1.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	100.0
2.	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	100.0
	Սոցիալական նպաստներ եվ կենսաթոշակներ		
1.	Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	480.0
2.	Այլ նպաստներ բյուջեից	4729	1300.0
1.	Պահուստային միջոցներ	4819	1040.0
	Ընդամենը		20774.0

Ձաջուռ համայնքի ղեկավար՝

Ս. Սուվարյան

4.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման Ժամկետը /հազ. դրամ/
1.	<i>Բնակավայրի տարածքի ռոռզման համակարգի վերանորոգում ցանցի ընդլայնում</i>	35000.0	35000.0	3500.0	2017թ.
2.	<i>համայնքային կենտրոնի կառուցում</i>	100000.0	100000.0	10000.0	2018թ.
3.	<i>Եկեղեցու վերանորոգում</i>	10000.0	10000.0	1000.0	2017թ.
4.	<i>Գազաֆիկացում</i>	300000.0	300000.0	0	2018-2021թթ.
5.	<i>համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում</i>	1500.0	0.0	1500.0	2018թ.
6.	<i>Գերեզմանոցի ցանկապատի վերանորոգում և բարեկարգում</i>	1000.0	0.0	1000.0	2019թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Զաջուռ համայնքի ռոռզման համակարգի վերանորոգում, ցանցի ընդլայնում

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի ռոռզման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 22 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 150 հա վարելահողերի ռոռզման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի մասնակի ռոռզում է

իրականացվում հողային առուների միջոցով իսկ գյուղամիջյան տնամերձ հողամասերի ոռոգման ցանցը քայքայված է: Ցանցի վերանորոգման և ընդլայնման դեպքում կարող է ոռոգվել շուրջ 150 հա վարելահող:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է ոռոգման համակարգի վերանորոգման և ցանցի ընդլայնման միջոցով ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 150 հա վարելահողերը: Բարձրացնել դաշտավարության արդյունավետությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել առկա ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը, ճշտել ոռոգման ծավալները և ցանցի ընդլայնման հնարավորությունները, կազմել թերությունների ակտ և պատվիրել նախագծա-նախահաշվային պաստատուներ:
- Ծրագրի ֆինանսավորման հարցով դիմել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԻՖԱԴԻ/ իրականացման գրացենյակին:
- Ապահովել ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:
- Ծրագրի ավարտից հետո ապահովել ցանցի անխափան շահագործումը:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԳՏՁԾ-ԻՖԱԴԻ/ և համայնքի ներդրման միջոցներով: Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 35 մլն. դրամի ներդրում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ ոռոգելի կդառնա համայնքի շուրջ 150 հա վարելահողեր: Կբարձրացրանա դաշտավարության արդյունավետությունը:

ԾՐԱԳՐԻ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 35 մլն. դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ գումարով 3.5 մլն. դրամ պարտավորվում է ապահովել համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջաջուռ համայնքի ղեկավար՝ Սոկրատ Սուվարյան:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի համայնքային կենտրոնի կառուցում, անհրաժեշտ գույքի ապահովում

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը կառուցվել էր 1978 թվականներին, սակայն 1988թ-ի երկրաշարժից ամբողջովին ավերվեց: Մշակույթի տունը համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախն է:

Համայնքային կենտրոնի բացակայության պատճառով գյուղում մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում: Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել այս ծրագիրը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կառուցել համայնքային կենտրոն որը իր մեջ կներառի և գյուղապետարան և մշակույթի տուն և ժամանցի կենտրոն և փոստ, համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավադությունները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին /ՀՄՆՀ / ներկայացնել մշակույթի տան նորոգման և գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել համայնքային կենտրոնի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀՄՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի /ՀՄՆՀ/ ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 100.0 մլն. Դրամ, ներդրում կպահանջվի 10 տոկոսը, որը կազմում է 10 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2018 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել համայնքային կենտրոնի պահպանումը և սպասարկումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջաջուռ համայնքի ղեկավար՝ Սոկրատ Սուվարյան:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

Ծ Ր Ա Գ Ր Ի Դ թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի հեկեղեցու վերանորոգում

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի եկեղեցին կառուցվել է 1910թ-ին : Այն համայնքի համար ծառայել է հոգևոր կենտրոն մինչև 1930թ-ը, դրանից հետո այն օգտագործվել է որպես մշակույթի կենտրոն:Խորհրդային ժամանակներում եղել է որպես պահեստ: 1988թ-ի երկրաշարժից դարցել է վթարային :Այժմ այն օգտագործվում է հոգևոր կենտրոն և այնտեղ կատարվում են եկեղեցական ծիսակատարություններ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Վերանորոգել եկեղեցին, կատարել ներքին հարդարման աշխատանքներ, ցանկապատել, վերականգնել համայնքի հոգևոր ավադույթները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և անհատ բարերարների ներկայացնել եկեղեցու նորոգման և գույքի համալրման ծրագիրը:

- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել եկեղեցու նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել համայնքից պահանջվող ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնել անհատ բարերարների ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 10.0 մլն. Դրամ, ներդրում պարտավորվում է ապահովելու համայնքը, թե ֆինանսապես և թե աշխատուժով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2017 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել եկեղեցու պահպանումը և սպասարկումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջաջուռ համայնքի ղեկավար՝ Սոկրատ Սուվարյան:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի հետ կապված անհատներ, արտասահմանում բնակվող անհատ բարերարներ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի գազաֆիկացում

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ջաջուռ համայնքում շուրջ յոթ ամիս ձմեռ է: Մարդիկ իրենց առանձնատները ջեռուցում են փայտով և հիմնականում աթարով: Բնակչության կենցաղը ավելի բարեկեցիկ դարձնելու ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է համայնքը գազաֆիկացնել:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գազաֆիկացնել համայնքը և բնակչության կենցաղը դարձնել ավելի բարեկեցիկ: Գազաֆիկացնել համայնքի միջնակարգ դպրոցը, թանգարանը, բուժ-ամբուլատորին, համայնքապետարանը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի տնտեսությունները, ճշտել գազ անցկացնելու ցանկություն ունեցող տնտեսությունների քանակը և պատվիրել նախագծա-նախահաշվային պաստատուներ:
- Ծրագրի ֆինանսավորման հարցով դիմել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԻՖԱԴԻ/ իրականացման գրացենյակին:
- Ապահովել ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:
- Ծրագրի ավարտից հետո ապահովել ցանցի անխափան շահագործումը:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԳՏՏԶԾ-ԻՖԱԴԻ/ և համայնքի ներդրման միջոցներով: Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 250.0 մլն. Դրամ, ներդրում կպահանջվի 25.0 մլն.դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2018-2020 թվականներին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջաջուռ համայնքի ղեկավար՝ Սոկրատ Մուվարյան:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ջաջուռ համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Հանքակուպճի միջոցով փոսւլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային 1.5կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածներ՝ 7500քառ.մ. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝

Փողոց թիվ 1 – 600զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 3000քառ.մ.

Փողոց թիվ 2 – 300զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 15000քառ.մ.

Փողոց թիվ 3 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.

Փողոց թիվ 4 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.

Փողոց թիվ 5 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000 քառ.մ..

Փողոց թիվ 6 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.

Ընդամենը՝ 1500զծ. մ. մակերեսը՝ 7500քառ.մ.

2. Հանքակուպճի միջոցով փոսալցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա դաշտամիջյան ճանապարհների 1.5 կմ ընդհանուր երկարություն տարբեր տեղամասեր՝ 7500 քառ.մ. ընդհանուր մակերեսով:

Այդ թվում՝

բամբկաձոր կոչվող հանդամաս՝ 300 զծ.մ. երկարություն, 1200 քառ.մ. մակերեսով.

Ղոաժներ կոչվող հանդամաս ` 300 զծ.մ. երկարություն, 1200 քառ.մ. մակերեսով.

Խաչքարի հետև կոչվող հանդամաս ` 300 զծ.մ. երկարություն, 1200 քառ.մ. մակերեսով.

Շեքինի հանքի մոտ կոչվող հանդամաս `400 զծ.մ. երկարություն, 1600 քառ.մ. մակերեսով.

Ընդամեն՝ 1300 զծ. մ., մակերեսը՝ 5200 քառ. մ:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ:

:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրարի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:

- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյան ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
<i>Տեխնիկական միջոցների շահագործում</i>						
1	Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/	Ժամ	200	2000	400000	
2	Բարձիչ մեխանիզմով բարձման ախատանքների իրականացում՝ -հանքակոպիճի բարձում՝ 150խ.մ. -ավազի բարձում՝ 110խ.մ. -շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 20խ.մ.	Խոր.մ	250	1200	300000	
3	Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում	Խոր.մ	250	1000	200000	
	Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	900000	
<i>Աշխատանք</i>						
1.	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	Քառ.մ	20000	X	X	Համայնքի անդամներ

<i>Ընդամենը աշխատանք</i>		X	X	X	X	
<i>Նյութեր</i>						
1	Հանքակոպիճ	Խոր.մ	100	X	X	Համայնքի ներդրում
2	Ավազ	Խոր.մ	80	X	X	Համայնքի ներդրում
3	Դիզելային վառելանյութ	լիտր	2000	300	600000	
<i>Ընդամենը նյութեր</i>					<i>900000</i>	
<i>Ընդամենը ծախսեր</i>					<i>1500000</i>	

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1500.0 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2018թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ջաջուռ համայնքի ղեկավար՝ Սոկրատ Սուվարյան:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Ջաջուռ համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 6
ԳԵՐԵՁՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է գյուղի գործող գերեզմանոցի ցանկապատի վերանորոգում: Գերեզմանոցում տեղադրվելու է հանգստաքար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ պաշտպանված ու խնամված գերեզմանոցներ: Ծրագրի խնդիրներն են.

Խնդիր 1. Ավարտել պահակակետի շին. աշխատանքները և ներկել ցանկապատի մետաղյա կոնստրուկցիաները:

Խնդիր 2. Գերեզմանոցներում տեղադրել հանգստաքարեր 1 հատ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 1.0 մլն. դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքային բյուջեի միջոցներով 2019թ. ընթացքում:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գերեզմանոցը կդադարի «արոտատեղի» լինենուց, կբացառվեն անհարգի վնասները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Առկրատ Աուվարյանը:

ԵԶՐԱՓՈՒՄ

Ջաջուռի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2017-2021թ.թ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման կոնկրետ ծրագրեր կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթհայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմվել է համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավակնությամբ:

